# ԱՌԱՋԱՐԿ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ (Կ-428-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 1.** Նախագծի 22-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

**Հոդված 22. Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում՝**

1) «28» թիվը փոխարինել «30» թվով
2) 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած

**Հոդված 2**. Նախագծի 27-րդ հոդվածից հանել «հինգ բառը փոխարինել երեք բառով» նախադասությունը:

**Հոդված 3.** Նախագծի 27-րդ հոդվածում «վեց» բառը փոխարինել «տասը» բառով:

## «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-428[9]-20.12.2019,02.03.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**Հոդված1.** Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

Սույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

**Առաջարկ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ.**

Առաջարկում ենք օրենքների նախագծերի փաթեթից հանել «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին և Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը:

«Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում առաջարկված փոփոխությունները վերաբերվում են դատավորի թեկնածուի հավակնորդին ներկայացվող պահանջներին: Համաձայն մեր առաջարկի՝հավակնորդը պետք է լինի առնվազն 30 տարեկան, ունենա 7 տարվա աշխատանքային փորձ , իսկ օտար լեզուներ իմանալու պահանջը հանվի:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները կապված են օրենսգրքի 169.28-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար վարչական տույժի նշանակման ժամկետների հետ:

Բանկային գաղտնիքի, ինչպես նաև ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին օրենքների նախագծերը սույն փաթեթից հանելու առաջարկը կապված է 06.02.2020թ-ին ՀՀ Նախագահ Արմենի Սարգսյանի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին (Կ-290-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011, Կ-2901-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011) ՀՀ օրենքները չստորագրելու և դրանց սահմանադրականությունը որոշելու հարցով ՀՀ սահմանդրական դատարան դիմելու հետ: Դրանով պայմանավորված գտնում ենք, որ անհրաժեշտ է այս փուլում ձեռնպահ մնալ սույն նախագծերը ընդունելուց: